Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2024-2025 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

***ա) Հայոց պատմություն** (20 **միավոր**)*

1. Ե՞րբ է կնքվել Մծբինի զինադադարը. 0,5 մ.
   ա/ 60 թ. բ/ 296 թ. գ/ 62 թ. դ/ 337 թ.
2. Ո՞վ է գահակալել Հայաստանում Արշակ Ի-ից հետ. 0,5 մ.
   ա/ Պապ բ/ Միհրդատ Իբերացի գ/ Հռադամիզդ դ/ Գիսակ Դիմաքսյան
3. Որտե՞ղ է գտնվում Արծաթի գյուղը. 0,5 մ.
   ա/ Բարձր Հայք բ/ Տուրուբերան գ/ Այրարատ դ/ Վասպուրական
4. Ո՞վ է ՀՍԽՀ-ից ընդգրկվել 1922 թ. Ջենովայի կոնֆերանսի պատվիրակության կազմում. 0,5 մ.
   ա/ Սահակ Տեր-Գաբրիելյան բ/ Ալեքսանդր Բեկզադյան
   գ/ Ասքանազ Մռավյան դ/ Ալեքսանդր Խատիսյան
5. Ո՞ր թվականին է Երևանի նահանգը տրոհվել յոթ գավառների. 0,5 մ.
   ա/ 1870 թ. բ/ 1867 թ. գ/ 1849 թ. դ/ 1874 թ.
6. Քանի՞ հոդվածից է բաղկացած Հայաստանի անկախության հռչակագիրը. 0,5 մ.
   ա/ 12 բ/ 8 գ/ 37 դ/ 114
7. Ո՞ր դարի կաթողիկոս է եղել Ներսես Շնորհալին. 0,5 մ.
   ա/ X բ/ XII գ/ XI դ/ XIII
8. Ե՞րբ է հիմնադրվել Հայաստանի օգնության կոմիտեն. 0,5 մ.
   ա/ 1906 թ. բ/ 1910 թ. գ/ 1921 թ. դ/ 1974 թ.
9. Ե՞րբ է ստեղծվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան: 0,5 մ.
10. Ո՞ր դարում է հիմնվել Հարանց անապատի դպրոցը: 0,5 մ.
11. Ո՞վ է ընտրվել պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ: 0,5 մ.
12. Որքա՞ն էր Տիգրան Մեծի օրոք Կապադովկիայից Հայաստան տեղափոխվածների թիվը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Ութամյա պարտադիր կրթություն մտցնելը ՀԽՍՀ-ում
    բ/ Էլեկտրոնային արագացուցիչի շահագործումը
    գ/ Նուբբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
    դ/ Ծովակալ Իսակովի արձանի տեղադրումը
    ե/ ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովի հրավիրումը
    զ/ Ամերիկայի հայկական համագումարի հիմնումը
    է/ Հովհաննես Այվազովսկու արձանի տեղադրումը
    ը/ Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեի կազմակերպումը
    թ/ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնադրումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Նվեր Սաֆարյան
    2. Էդուարդ Կակոսյան
    3. Սերգեյ Ագանյան
    4. Խորեն Մուրադբեգյան
    5. Մկրտիչ Դաշտոյան
    6. Իվան Աղայանց

    ա. մարշալ բ. պարտիզան գ. 89-րդ դիվիզիայի հրամանատար
    դ. հետախույզ ե. այլախոհ զ. Ամենայն հայոց կաթողիկոս

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Բացի Մենուայի 72 կմ երկարություն ունեցող ջրանցքից՝ Տուշպա-Վան քաղաքից ոչ հեռու կառուցվել են 36 կմ երկարություն ունեցող Ռուսայի ջրանցքը և «Ռուսայի ծով» կոչված ջրամբարը:

բ/ Աքեմենյանների կառուցած «Արքայական ճանապարհի» մի մասն անցնում էր Հայաստանի հյուսիս-արևելքով:

գ/ Հայկազուն-Երվանդականների պետության մայրաքաղաքն էր Արմավիրը:

դ/ Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս է եկել Աղձնիքից և անցնելով հայկական Տավրոսը՝ Արածանիի ափով շարժվել դեպի Արտաշատ:

ե/ Տիգրան IV-ը զոհվել է Մեծ Հայքի տարածք ներխուժած ալանական քոչվոր ցեղերի դեմ ճակատամարտում:

զ/ Արշակունյաց թագավորության կառավարման տարիներին Հայաստանը պահպանում էր իր ազգաբնակչության միատար ժողովրդագրական կազմը:

է/ Արա Գեղեցիկ և Շամիրամ առասպելը արտացոլվել է Պլատոնի «Հանրապետություն» աշխատությունում:

ը/ Ասորեստանյան թագավորությունում Տորքը հայտնի էր Տարքու անունով:

թ/ Դեռևս վաղնջական ժամանակներում ձևավորված կրոնական վաղագույն ըմբռնումները՝ բնապաշտությունը, ոգեպաշտությունը, հմայական մոգությունը, հելենիզմի շրջանում գոյություն չեն ունեցել:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Արատտան աստվածապետական կամ թեոկրատական կարգով երկիր է եղել:

բ/ Վանի թագավորության զորքերի գերագույն հրամանատարը սպարապետն էր:

գ/ Սահմանների պաշտպանությունն իրականացնում էր արքունքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված ոստանիկ այրուձին:

դ/ Թագավորի անձի պաշտպանությունն ապահովում էր ընտրյալ նետաձիգներից բաղկացած և երկրի սահմաններում գտնվող մաղխազական այրուձին:

ե/ Մաղխազությունը գլխավորում էր մաղխազը, ով զբաղված էր արքունի կալվածքների հսկողությամբ:

զ/ Կիլիկիայում արքունի հեծելազորի հրամանատարը մարաջախտն էր:

է/ Կիլիկիան Հայաստանում արքունի պալատի կառավարիչը կանցլերն էր:

ը/ Կիլիկյան Հայաստանի հիմնական դրամական միավորը արծաթե դրամն էր, որը կոչվում էր թագավորական:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1991 թ. մայիսից Ադրբեջանի կողմից հրահրվել է ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:

բ/ 1991 թ. հուլիսին ստեղծվել են ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտեն և ինքնապաշտպանական ուժերի շտաբը:

գ/ 1992 թ. հունվարի 25-ի և լույս 26-ի գիշերը Քարինտակի մարտերում ադրբեջանական բանակը պարտություն է կրել և մարտադաշտում թողնելով 74 սպանված և 70 վիրավոր՝ նահաջել:

դ/ 1992 թ. հայ մարտիկները գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի (Իվանյանի) բնակիչները հեռանային Աղդամ:

ե/ 1992 թ. ամռանը ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրություն է հայտարարվել:

զ/ Մոնթե Մելքոնյանը ավարտել է Բերկլիի համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը (1978 թ.):

է/ Ֆրիտյոֆ Նանսենի հեղինակած «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» գիրքը ֆրանսերեն հրատարակությունում կրում է «Խաբված ժողովուրդ» վերնագիրը:

ը/ 1994 թ. ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահը Ռոբերտ Քոչարյանն էր:

թ/ ԼՂՀ պաշտպանության խորհրդի նախագահը Արկադի Տեր-Թադևոսյանն էր:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (սխալը գտնելը և ուղղելը՝ 0,5-ական մ.)
1915 թ. մարտից սկսած՝ թուրքական բանակի որոշ սպորաբաժանումներ և քրդական ջոկատներ արևմուտքից շարժվել են դեպի Սասուն:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Պատերազմը, երևի, ամառը կվերջանա և պատերազմից հետո կմեկնեմ Ամերիկա, ուր, հավանաբար, կլինեմ սեպտեմբերի մեջ... կմնամ մի քանի տարի, մինչև որ բոլոր ամերիկահայերին վերադարձնենք հայրենիք... Հույս կա, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Անգլիան ու Ֆրանսիան ուժ կտան մեր պահանջներին, և մոտ ապագայում կստեղծվի ազատ Հայաստան: Համենայն դեպս, այդ հույսով ենք ապրում բոլորս և միայն դրա համար աշխատում»:
ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
բ. Ե՞րբ է գրվել այս նամակը:
գ. Ո՞ր կոմիտեին է ուղղված նամակը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Հայ պատմագրության մեջ ... (ինչի՞, 1) ուղղության հիմնադիրը Մատթեոս Ուռհայեցին է, որից հետո նույն ուղղության հաջորդ ներկայացուցիչը ... ...-ն (2) է (XII դ.), ով դեպքերի շարադրումն սկսում է արարչագործությունից և հասցնում մինչև ... (3) թ.:

21. Տրամաբանական խնդիր. *Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 12650 տարեկան է, քարի դարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր աշխարհն է նահանգի հարավարևմտյան հարևանը:

23. Հայ նշանավոր ռազմական ո՞ր գործիչն է պատկերված. 0,5 մ.

24. Աշխատանք 1916 թ. փետրվարին տպված ծաղրանկարի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Արևմտյան Հայաստանի ո՞ր քաղաքին առնչվող առանցքային իրադարձության առիթով է ֆրանսիական մամուլը տպել այս ծաղրանկարը:
բ. Ո՞ր պետության զորքեր են պատկերված ձիերի վրա գերակա դիրքերում:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ նախաձեռնությամբ է ստեղծվել Եռյակ դաշինքը. 0,5 մ.
ա/ Նապոլեոն III բ/ Ֆրիդրիխ II գ/ Օ. Բիսմարկ դ/ Ա. Իզվոլսկի
2. Ո՞վ է քաղաքական կատակերգության հեղինակը Հին Հունաստանում. 0,5 մ.
ա/ Էսքիլես բ/ Էվրիպիդես գ/ Սոֆոկլես դ/ Արիստոֆանես
3. Ե՞րբ է սոցիալիստական վարչակարգը փլուզվել Արևելյան Գերմանիայում. 0,5 մ.
ա/ 1986 թ. բ/ 1991 թ. գ/ 1989 թ. դ/ 1993 թ.
4. Ո՞վ է «Եվրոպայի մայրամուտը» աշխատության հեղինակը. 0,5 մ.
ա/ Օ. Շպենգլեր բ/ Ս. Հանթինգթոն գ/ Զ. Բժեզինսկի դ/ Վ. Վիլսոն
5. Ինչպե՞ս էր կոչվում 2003 թ. Վրաստանում տեղի ունեցած հեղափոխությունը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. Ս. Դալի	2. Է. Նոլդիե	3. Ու. Բոչչոնի	4. Վ. Կանդինսկի
ա. էքսպրեսիոնիզմ	բ. ֆուտուրիզմ	գ. աբստրակցիոնիզմ	դ.սյուրռեալիզմ

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ 1957 թ. ԱՄՆ-ն տիեզերք է ուղարկել Երկրի առաջին արհեստական արբանյակը:

բ/ 1969 թ. լուսնի վրա առաջինն իջել են ամերիկացի երեք տիեզերագնացներ:

գ/ 1999 թ. Ֆ Ֆուկույաման հանդես է եկել իր «Պատմության ավարտը» աշխատությամբ:

դ/ Իրանի նախագահ Մ. Խաթամին հանդես է եկել «քաղաքակրթությունների երկխոսություն» գաղափարով:

ե/ Բ. Օբամայի և Վ. Պուտինի նախագահության շրջանում՝ 2010 թ., ստորագրվել է երկար հեռահարության միջուկային մարտագլխիկներով հրթիռների կրճատման նոր պայմանագիրը:

զ/ 1991 թ. հունիսի 12-ին ընդունվել է Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը:

է/ 1996 թ. գործող Շանհայի հնգյակի անդամ պետություններից էին Չինաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը, 2001 թ. միացել է նաև Ուզբեկստանը:

ը/ 1999 թ. Կոսովոյում սկսված էթնիկական զտումների արդյունքում Մակեդոնիա են շարժվել սերբ փախստականների ալիքներ:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)

ա. Հին Հունաստանի հայտնի քանդակագործներից 2-ին,

բ. Հին հռոմեացիների կողմից առաջին անգամ կառուցված շինությունների տիպերից 2-ը:

9. Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է ընդհատվող գծերով սահմանանշված ուրվագծային քարտեզում:

բ. Ո՞րն է նրանում իշխած երկրորդ հարստությունը:

10. Ինչպե՞ս է կոչվում Ռեմբրանդտի այս նշանավոր կտավը (1642 թ.). 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում ձախ կողմում պատկերված կինը:

բ. Ռազմաքաղաքական ո՞ր դաշինքին է շուտով հարելու այս կինը՝ հրաժարվելով աջ կողմում պատկերված՝ արդեն նախկին դաշնակիցներից:

գ. Ո՞ր թվականին է տեղի ունեցել խորհրդանշական ձևով պատկերված այս իրադարձությունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

04.03.2025 թ.